

Քաղաքացիների ընդունելություն

07.06.2016

Հունիսի 7-ին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը մարզպետարանում կատարեց քաղաքացիների ընդունելություն: Ընդունելության մասնակից 13 քաղաքացիները դիմումներ ներկայացրին պետպատվերի շրջանակներում բուժման մեկնելու, առողջարանային ուղեգիր ձեռք բերելու, աշխատանքի տեղավորման, աղքատության ընտանեկան նպաստների վերականգնման, կոմունալ- կենցաղային բնույթի խնդիրներով: Ներկայացված դիմումները հաշվառվեցին մարզպետարանի աշխատակազմում, որոնց պատասխաններ կտրվեն օրենքով սահմանված ժամկետում: